ՆԱԽԱԳԻԾ
(Լրամշակված տարբերակ)
(Կ-049[2]-07.03.2019-ՏՀ-011/0)
~~ՆԱԽԱԳԻԾ~~

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ~~ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ~~ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հանրային ծառայության մասին» ~~Հայաստանի Հանրապետության~~ 2018 թվականի մարտի 23-ի ՀՕ-206-Ն օրենքի 42-րդ հոդվածի՝

1) 1-ին մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«Հայտարարագրի՝ «Մասնակցությունը առեւտրային կազմակերպություններում» բաժնում նշվում են կազմակերպության անվանումը, որի հիմնադիր են հանդիսանում կամ որի կանոնադրական կապիտալում մասնակցություն ունեն հայտարարատու պաշտոնատար անձը եւ (կամ) նրա ընտանիքի անդամները կազմակերպությունում ունեցած մասնակցության (փայեր, բաժնետոմսեր, բաժնեմասեր) քանակը, տոկոսը, ձեռքբերման օրը, ամիսը, տարին, կամ որի կառավարման մարմիններում ընդգրկված անձանց իրավասու է նշանակել կամ ազատել հայտարարատու պաշտոնատար անձը եւ (կամ) նրա ընտանիքի անդամները, հարկ վճարողի հաշվառման համարը, հասցեն»:

2) 2-րդ մասում «հայտարարատու պաշտոնատար անձը» բառերից հետո լրացնել «եւ (կամ) նրա ընտանիքի անդամները» բառերը:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2019 թվականի հուլիսի 1-ից: